



# the armenian eyecare project

## bringing sight to armenian eyes

Էլեկտրոնային լրագրք 2011- # 2

### Հեռադարձ հայացք 2011 թ.

Սկսվեց ՀԱՆ-ի հինգերորդ շրջայցը ՀՀ-ում:

Երևանում կայացավ ևս մեկ միջազգային համաժողով՝ նվիրված անհասության ռետինոպաթիա (ԱՌ) հիվանդությանը: Ամփոփվեցին ՀԱՆ-ի կողմից իրականացվող ԱՌ ակնային զննումների և բուժման ազգային ծրագրի մեկ տարվա արդյունքները և նախանշվեցին հետագա անելիքները:



ՀԱՆ-ն ավարտեց իր համագործակցությունը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ և երկարատև համագործակցություն սկսեց Orange Հիմնադրամի հետ:



2011 թ. Հայկական ակնաբուժության նախագիծը (ՀԱՆ) իրականացրեց իր «Լույս հայի աչքերին» ծրագիրը հետևյալ ժամանակացույցով. Կոտայք՝ մարտ-ապրիլ, Տավուշ՝ ապրիլ-հունիս, Լոռի՝ հունիս-հուլիս, Շիրակ՝ օգոստոս-սեպտեմբեր, Արագածոտն՝ հոկտեմբեր-նոյեմբեր:

Արդյունքներ՝ 2003 թ. հունիսից մինչև 2011 թ. սեպտեմբեր.

- ՀՀ ամբողջ տարածքում 291,609 մարդ ՀԱՆ-ի ակնային զննում է անցել՝ ներառյալ 130,339 երեխա:
- 31,968 մարդ անցել է խորացված հետազոտություն ԱՇՀ-ում:
- 13,453 մարդ ԱՇՀ-ում վիրահատվել կամ լազերային բուժում է ստացել:
- Պատրաստվել ու անվճար տրամադրվել է 40,365 ակնոց:
- Վերապատրաստվել է 2,000 բուժաշխատող, այդ թվում՝ ակնաբույժներ, ընտանեկան բժիշկներ և ակնաբուժական քույրեր ՀՀ մարզերից և Երևանի պոլիկլինիկաներից:
- Բաժանվել է 513,156 տեղեկատու գրքույկ: Անցկացվել է հանրային կրթության 378 դասընթաց՝ 9,800 երեխաների և 900 մեծահասակների համար:

Ըստ նախնական ծրագրի՝ 2012 թ. ՀԱՆ-ը կայցելի հետևյալ մարզեր. Արարատ՝ մարտ-մայիս, Վայոց Ձոր՝ հունիս, Սյունիք՝ հուլիս, Արմավիր՝ սեպտեմբեր- հոկտեմբեր: Հուլիս-օգոստոս ամիսներին հնարավոր է նաև այցելություն ԼՂՀ:

bringing  
**sight**  
to armenian eyes  
the armenian eyecare project

Այգեստան 5-րդ փ., տ. 7  
Երևան, ՀՀ  
հեռ. (374 10) 55 90 68  
ֆաքս (374 10) 57 76 94  
info@eyecareproject-  
armenia.com

p.o. box 5630  
newport beach, ca 92662  
phone 949.675.5767  
fax 949 673.2356  
aecp@eyecareproject.com

www.eyecareproject-armenia.com  
www.eyecareproject.com

Հայկական ակնաբուժության նախագիծը (ՀԱՆ) ԱՄՆ-ում 1992 թ. հիմնադրված բարեգործական կազմակերպություն է, որի առաքելությունն է կանխարգելել ձեռքբերովի կուրությունը Հայաստանում: 2003 թ. ՀԱՆ-ը սկսել է իր «Լույս հայի աչքերին» ծրագիրը, որի հիմնական ուղղություններն են՝ բուժօգնություն, տվյալների հավաքագրում և հետազոտական աշխատանքներ, բժշկական ուսուցում և վերապատրաստում, հանրային ուսուցում և իրազեկում և կարողությունների զարգացում: Ժամանակակից սարքավորումներով հագեցած Աչքի շարժական հիվանդանոցը (ԱՇՀ) շրջում է Հայաստանի մարզերում՝ բնակչությանը տրամադրելով բարձրորակ ակնաբուժական ծառայություններ:

#### ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Միջազգային համաժողով  
«Անհասության  
ռետինոպաթիայի  
ազգային ծրագիր. մեկ  
սարի անց՝ արդյունքներ և  
հեռանկարներ»:



Orange Հիմնադրամի  
հետ համատեղ ծրագրերը  
Շիրակի և Արագածոտնի  
մարզերում



Աջակցություն ՀԱՆ-ի  
աշխատանքներին  
«Վալլենա» խմբի  
ընկերությունների կողմից

Տեսողության  
համախարհային օրը  
2011 թ. նվաճեց մարզական  
իրադարձությանը

Բարեգործություն Անես  
Հայրապետյանի կողմից

ԱՄՆ ՄԶԳ-ն և  
ՀԱՆ-ն ավարտեցին  
համագործակցությունը

# Միջազգային համաժողով «Անհասության ռեփորմացիայի ազգային ծրագիր. մեկ տարի անց՝ արդյունքներ և հեռանկարներ»

Արդեն հետազոտվել է 400-ից ավելի անհաս նորածին, որոնցից 40-ն ստացել է լազերային վիրահատություն:



2011 թ. հուլիսի 15-ին Երևանում կայացավ «Անհասության ռեփորմացիայի ազգային ծրագիր. մեկ տարի անց՝ արդյունքներ և հեռանկարներ» թեմայով միջազգային համաժողովը, որը կազմակերպել էր ՀԱՆ-ը՝ Լոս Անջելեսի մանկական կլինիկայի աչքի կենտրոնի, ՀՀ առողջապահության նախարարության և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության համագործակցությամբ:

Համաժողովն ամփոփեց ՀԱՆ-ի կողմից իրականացվող Անհասության ռեփորմացիայի (ԱՌ) ակնային զննումների և բուժման ազգային ծրագրի մեկ տարվա արդյունքները և նախանշեց հետագա անելիքները:

Հիշեցնենք, որ ծրագիրը մեկնարկել է 2010 հունիսին: Ծրագրի համաձայն ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան կարգադրությամբ՝ պարբերական ակնային զննումներ են իրականացվում նորածինների վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի Երևանի բոլոր բաժանմունքներում:

Արդեն հետազոտվել է 400-ից ավելի

անհաս նորածին, որոնցից 40-ն ստացել է լազերային վիրահատություն: Բացի այդ, շարունակվում է նաև ՀԱՆ-ի կողմից համակարգվող հեռաբժշկության ծրագիրը: Այս նախաձեռնության շնորհիվ հայ և ամերիկացի մասնագետները գտնվում են մշտական կապի մեջ և խորհրդակցում են Հայաստանում հանդիպող ԱՌ բոլոր դեպքերի շուրջ:

Այս տարվա համաժողովի կապակցությամբ ԱՄՆ-ից Հայաստան էին ժամանել միջազգային ճանաչուն ունեցող մանկական ակնաբույժ, Լոս Անջելեսի Մանկական հիվանդանոցի Աչքի կենտրոնի ռեփորմացիայի ինստիտուտի տնօրեն Թոմաս Լին և նեոնատոլոգ, Ֆիլադելֆիայի Մանկական հիվանդանոցի բժշկական փոխտնօրեն Էլիզաբեթ Ռաբբը:

Համաժողովի զեկույցներն ու քննարկումները վերաբերում էին ԱՌ պատմությանը և հիվանդության ախտորոշման և բուժման առանձնահատկություններին: Առանձնակի ուշադրություն դարձվեց անհաս նորածիններին տրամադրվող թթվածնի հոսքի կարգավորման և վերահսկման

հարցերին, քանի որ վերջիններս վճռորոշ դեր ունեն ԱՌ հիվանդության կանխարգելման գործում: Այս կապակցությամբ ՀԱՆ-ը մտադիր է աջակցել հայ նեոնատոլոգներին երկու հիմնական ուղղություններով. օդի և թթվածնի հոսքերը վերահսկող անհրաժեշտ ժամանակակից սարքավորման ներկրում և տեղադրում, մասնագետների կարողությունների զարգացում:

Համաժողովի անբաժան մաս կազմեցին մասնագիտական վերապատրաստման գործնական դասընթացները, որոնք տեղի ունեցան հուլիս 16-ին, ակնաբույժների համար՝ Ս. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնում, և նեոնատոլոգների համար՝ Մուրացան բժշկական կենտրոնում: Հայ բժիշկները ծանոթացան անհաս երեխաների ակնային զննման, ռեփորմացիայի ախտորոշման, լազերային բուժման իրականացման և նորագույն սարքավորման օգտագործման նրբություններին, ինչպես նաև իրենց ամերիկացի գործընկերներից ստացան նոր տեղեկություններ նորածինների խնամքի շուրջ:



# Orange Հիմնադրամի հետ համատեղ ծրագրերը Շիրակի և Արագածոտնի մարզերում

Այս տարի անձանը ՀԱՆ-ը համագործակցություն սկսեց Orange Հիմնադրամի հետ: Վերջինս աշխարհում հայտնի հեռահաղորդակցության օպերատոր Orange խմբի բարեգործական և մարդասիրական ծրագրերն իրականացնող հիմնական կառույցն է:

Համարելով հաղորդակցումը հասարակության զարգացման հիմնական խթաններից մեկը՝ Orange Հիմնադրամն աջակցում է այնպիսի ծրագրերի, որոնք հաղորդակցությունը դարձնում են առավել մատչելի բոլորի համար:

ՀԱՆ-ը պատիվ ունի հայտարարելու, որ Orange Հիմնադրամն աջակցում է նաև 2012 թ. ՀՀ մարզերում կայանալիք աշխատանքներին: Այս առթիվ Orange Հիմնադրամի հանգանակությունը կկազմի 50,000 եվրո:



# Շիրակի մարզ

Օգոստոս-հոկտեմբեր ամիսներին Շիրակի մարզում Orange Հիմնադրամի հետ համատեղ ծրագրի շնորհիվ բժշկական աջակցություն ստացավ 5,693 մարդ:



Սկսած օգոստոսի 16-ից՝ ՀԱՆ-ի ակնաբուժական խմբերն այցելեցին երկու քաղաքային և 44 գյուղական համայնքներ Շիրակի մարզի Աճիի, Արթիկի, Ախուրյանի, Աշոցքի և Ամասիայի շրջաններում: Այնուհետև ՀԱՆ-ի Աչքի շարժական հիվանդանոցը (ԱՇՀ) կայանեց երեք շրջկենտրոններում՝ Մարալիկում, Արթիկում և Ախուրյանում, որտեղ անհրաժեշտ բուժում ստացան ԱՇՀ ուղեգրված բոլոր հիվանդները:

Ծրագրի շրջանակներում 4,564 մեծահասակներ և 1,129 երեխաներ անցան ակնային հետազոտություն, շուրջ 614 մեծահասակներ՝ խորացված հետազոտություն ԱՇՀ-ում, տրամադրվեցին 2,429 ակնոցներ: ԱՇՀ-ում իրականացվեցին ավելի քան 293 վիրահատություններ և լազերային բուժումներ:

Ակնային զննումներին զուգահեռ 415 երեխաների համար Շիրակի մարզի ինը դպրոցներում անց կացվեցին նաև ակնային խնամքի հանրակրթական հատուկ դասընթացներ:

Շիրակի մարզում ՀԱՆ-ի աշխատանքներին աջակցելու համար Orange Հիմնադրամը տրամադրել էր 9 միլիոն դրամ:

Սեպտեմբերի 30-ին, Ախուրյանում կայանած Աչքի շարժական հիվանդանոց (ԱՇՀ) էր այցելել Orange Արմենիա


ընկերության գլխավոր տնօրեն և Orange Հիմնադրամի խորհրդի նախագահ Բրունո Դյուբուան՝ ծանոթանալու աշխատանքների ընթացքին: Բրունո Դյուբուան ծանոթացավ ԱՇՀ-ի վիրահատական սարքավորմանը, ակնատես եղավ հիվանդների զննմանն ու վիրահատություններին և գրուցեց մարդկանց հետ նրանց տպավորությունների շուրջ:

«Տեսողական խնդիրներ ունեցողներն Orange Հիմնադրամի հոգածության կենտրոնում են ոչ միայն Հայաստանում, այլ բազմաթիվ այլ երկրներում, ուր գործում է Հիմնադրամը: Մեր ընկերության ամենաառաջնային խնդիրն է հեշտացնել հաղորդակցումը մարդկանց միջև, իսկ մարդկային հաղորդակցության գործում մեծ է տեսողության դերը: Այսօր մենք հանդիպեցինք մարդկանց, ում կյանքը փոխվել է Հիմնադրամի ու մեր գործընկերների շնորհիվ: Հպարտ ենք համագործակցել Հայկական ակնաբուժության նախագծի հետ: Հենց այս արդյունքները տեսնելով ենք որոշել շարունակել համագործակցությունը: Հաջորդ մարզը, ուր կայցելի շարժական հիվանդանոցը, կլինի Արագածոտնը», ասաց Orange Հիմնադրամի խորհրդի նախագահ Բրունո Դյուբուան:



# Արագածոտնի մարզ

Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Orange Հիմնադրամի հետ համատեղ ծրագրի շնորհիվ Արագածոտնի մարզում բժշկական աջակցություն ստացավ 3,460 մարդ:



2,019 մեծահասակներ և 1,254 երեխաներ անցան ակնային հետազոտություն, 536 մեծահասակներ՝ խորացված հետազոտություն ԱՇՀ-ում, տրամադրվեց 1095 ակնոց: ԱՇՀ-ում իրականացվեցին 212 վիրահատություններ և լազերային բուժումներ: Ակնային զննումներին զուգահեռ, 478 երեխաների համար Արագածոտնի մարզի ինը դպրոցներում անց կացվեցին նաև ակնային խնամքի հանրակրթական հատուկ դասընթացներ: Բնակչության ակնային զննումների աշխատանքներում ՀԱՆ-ին ակտիվորեն աջակցեցին տեղի ակնաբույժները՝ մասնավորապես Թալիմի և Աշտարակի շրջաններում: Այստեղի և հարակից գյուղերի բնակիչները դիմում էին տեղի ակնաբույժներին, ովքեր հիվանդներին ընդունում էին շրջկենտրոններում կամ որոշակի օրերի այցելում շրջանների գյուղերը: ՀԱՆ-ի բժշկական խմբերն իրենց հերթին այցելեցին Արագածի և Ապարանի շրջանները: ԱՇՀ-ն կայանել էր Ծաղկահովիտում, Ապարանում, Թալիմում, և Աշտարակում: Արագածոտնի մարզում ՀԱՆ-ի

աշխատանքներին աջակցելու համար Orange Հիմնադրամը տրամադրել էր 5 միլիոն դրամ: Նոյեմբերի 17-ին, Աշտարակում կայանած ԱՇՀ այցելեց Orange Հիմնադրամի խորհրդի նախագահ Բրունո Դյուբուան՝ ծանոթանալու աշխատանքների ընթացքին: Սա նրա երկրորդ այցելությունն էր ԱՇՀ՝ հիվանդների զննմանն ու վիրահատություններին ակնատես լինելու և մարդկանց հետ նրանց տպավորությունների շուրջ գրուցելու նպատակով: «Շիրակի մարզի նախագծից հետո այսօր Արագածոտնում ենք, որտեղ հանդիպեցինք մարդկանց, ում կյանքը փոխվել է Հիմնադրամի ու մեր գործընկերների շնորհիվ: Հատկանշական է, որ ախտորոշված երեխաների 68%-ն ակնային զննում էին անցնում առաջին անգամ, իսկ հիվանդության առաջնային փուլում բացահայտումը միակ երաշխիքն է դրա հետագա զարգացման կանխման համար: Հպարտ ենք համագործակցել Հայկական ակնաբուժության նախագծի հետ և շնորհավորում ենք նրանց այս արդյունքների համար», ասաց Orange Հիմնադրամի խորհրդի նախագահ Բրունո Դյուբուան:

«Շիրակի մարզում մենք ավարտեցինք «Լույս հայի աչքերին» ծրագրի շրջանակում Հայաստանում իրականացվող մեր չորրորդ շրջայցը, իսկ Արագածոտնում սկսեցինք հինգերորդը: 2012 թ. մենք կայցելենք Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերը, ինչպես նաև հնարավոր է Լեռնային Ղարաբաղ: Ուրախալի է արձանագրել, որ սկսած 2003 թ. բազմաթիվ գործընկերների և հովանավորների աջակցությամբ մեզ հաջողվել է ստուգել ՀՀ բնակչության մի ստվար զանգվածի տեսողությունը և օգնել տասնյակ հազարավոր մարդկանց: Ուրախ ենք տեսնել Orange Հիմնադրամին մեր ռազմավարական գործընկերների շարքում և ցանկանում ենք Շիրակի և Արագածոտնի բնակչության անունից մեր խորին շնորհակալությունը հայտնել ցուցաբերած աջակցության համար: Մեզ հաճելի է, որ Orange-ը Հայաստանում կարողանում է ներկայացնել կորպորատիվ բարեգործություն իրականացնելու նման բարձր մակարդակի օրինակ», - ասաց ՀԱՆ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Նունե Եղիազարյանը:



# Աջակցություն ՀԱՆ-ի աշխատանքներին «Վալլեքս» խմբի ընկերությունների կողմից

Ըստ այս ծրագրի՝ Լոռու մարզի Թումանյանի շրջանում ակնաբուժական հետազոտության ծառայություններ մատուցվեցին ընդհանուր առմամբ մոտ 800 բնակչի, որոնցից մոտ 70-ը վիրահատվեց, իսկ շուրջ 300-ը ստացավ ակնոցներ:



Այս տարի ՀԱՆ-ի բժշկական խմբերը և Աչքի շարժական հիվանդանոցը (ԱՇՀ) արդեն չորրորդ անգամ այցելեցին Լոռու մարզ: Աշխատանքներ տեղի ունեցան Թումանյանի, Գուգարքի, Տաշիրի, Ստեփանավանի և Սպիտակի շրջաններում: ԱՇՀ-ն աշխատեց Ալավերդիում, Վանաձորում, Ստեփանավանում և Սպիտակում:

Նախորդ երեք այցելությունների ընթացքում Լոռու մարզում ՀԱՆ-ի կողմից հետազոտվել էր շուրջ 20.000 բնակիչ, որոնցից մոտ 1.300-ն անվճար վիրահատվել/լազերային բուժում էին ստացել, տրամադրվել էր ավելի քան 4.000 ակնոց:

Չորրորդ այցելության ընթացքում հետազոտվեց ևս 5.000 մարդ, որոնցից շուրջ 300-ը վիրահատվեցին, ինչպես նաև բնակիչներին տրամադրվեցին շուրջ 2.400 ակնոցներ: Բոլոր ծառայությունները մատուցվեցին բացառապես անվճար:

Ի տարբերություն նախորդ այցելությունների՝ այս անգամ ԱՇՀ-ն «Վալլեքս» խմբի ընկերությունների

աջակցությամբ և խնդրանքով կայանել է նաև Ալավերդի քաղաքում:

«Վալլեքս» խմբի ընկերությունների կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականությունն առաջին անգամ չէ, որ խաչվում է Հայկական ակնաբուժության նախագծի առաքելության հետ:

2008 թ. «Վալլեքս» խմբի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղում գործունեություն ծավալող «Բեյզ Մեթրլս» ընկերության աջակցությամբ ՀԱՆ-ը ակնաբուժական ծառայություններ մատուցեց ինչպես Դրմբոնի, այնպես էլ հարակից համայնքների բնակիչներին:

2009 թ. «Վալլեքս» խմբի «Արմենիան Քափրը Փրոգրամ» ընկերությունն աջակցել է ՀԱՆ-ի բժիշկների աշխատանքների կազմակերպմանը, ինչպես նաև հոգացել է Թումանյանի շրջանի բնակիչներին ակնային հետազոտության վայրեր տեղափոխելու և ակնոցների պատրաստման ծախսերը:

Ըստ այս տարվա ծրագրի՝ Թումանյանի շրջանում ակնաբուժական հետազոտության ծառայություններ մատուցվեցին ընդհանուր առմամբ մոտ 800 բնակչի, որոնցից մոտ 70-ը վիրահատվեց, իսկ շուրջ 300-ը ստացավ ակնոցներ:

Ավելին՝ տեղի բնակիչներից գատ, ՀԱՆ-ի բժիշկները նաև ակնային ստուգումների ծառայություններ մատուցեցին «Վալլեքս» խմբի «Թեդուտ» ընկերության բոլոր աշխատակիցներին:

Այս տարվա ծրագրի առաձեռնահատկություններից է նաև տեղի ակնաբույժների ակտիվ ներգրավումը ակնային հետազոտություններում: Մինչև ՀԱՆ-ի բժշկական խմբերի այցելությունը Լոռի, տեղի բժիշկներն արդեն գնել էին ԱՇՀ-ն ուղեգրել բուժման կարիք ունեցող բազմաթիվ մարդկանց:



# Տեսողության համաշխարհային օրը 2011 թ. նշվեց մարզական իրադարձությամբ

Այս տարի Հայաստանում առաջին անգամ տեսողության համաշխարհային օրը նշվել է մարզական իրադարձությամբ՝ «ՄԻԿԱ» մարզադահլիճում կայացել է ՀՀ գոլբոլի 2011թ. առաջնությունը:



Արդեն ութերորդ տարին է, ինչ Հայկական ակնաբուժության նախագծի նախաձեռնությամբ Հայաստանում նշվում է Տեսողության համաշխարհային օրը, որը նպատակ ունի հասարակության ուշադրությունը սևեռել տեսողական խանգարումներ ունեցող մարդկանց խնդիրներին:

Այս տարի Հայաստանում առաջին անգամ տեսողության համաշխարհային օրը նշվել է մարզական իրադարձությամբ: «ՄԻԿԱ» մարզադահլիճում կայացավ ՀՀ գոլբոլի 2011թ. առաջնությունը:

ՀՀ գոլբոլի, թվով երրորդ, այս առաջնությանը մասնակցելու էր եկել չորս թիմ (3 հոգի ամեն թիմում)՝ Գյումրիից «Շիրակը», Երևանի «Սիփանը», Արևյանից «Առյուծները» և Էջմիածնից «Կայծակը»:

«Այս տարիների ընթացքում Տեսողության համաշխարհային օրվա կապակցությամբ ՀԱՆ-ը հանդես է եկել բազմաթիվ միջոցառումներով՝ ցուցահանդեսներ, բարեգործական համերգներ, հրատարակությունների շնորհանդեսներ: Այս տարի, առաջին անգամ Հայաստանում, մի շարք գործընկերների հետ միասին մենք պատիվ

ուներք կազմակերպել և իրականացնել մի մարզական իրադարձություն, որի հիմնական խորհուրդն է բարձրաձայնել այն հանգամանքը, որ տեսողական խնդիրները չպետք է խոչընդոտեն մարդկանց ակտիվ կյանք վարելուն, սպորտով զբաղվելուն և հասարակությանը ինտեգրվելուն: Մեզանից յուրաքանչյուրի ներդրումն այս հարցում կարող է որոշիչ լինել: Կարծում ենք, որ այս միջոցառումը դրա լավ օրինակն է», - նշեց ՀԱՆ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Նունե Եղիազարյանը:

Մրցաշարի հաղթող ճանաչվեց և ՀՀ 2011թ. գոլբոլի չեմպիոն հռչակվեց Արովյանի «Առյուծներ» թիմը: Հաղթող թիմին մրցաշարի կազմակերպիչները հանձնեցին չեմպիոնի գավաթը: Առաջինից երրորդ տեղերը զբաղեցրած թիմերը ստացան ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներ: Մասնակից չորս թիմին էլ հավաստագրեր հանձնվեցին:

Առաջնության մասնակից թիմերի բոլոր խաղացողների համար Orange հիմնադրամը պատրաստել էր անակնկալ: Բոլոր 12 խաղացողներին հանձնվեցին հատուկ մեծ կոճակներով բջջային հեռախոսներ՝ «Հոգատար հեռախոս», որոնք նախատեսված են հաղորդակցության մեջ

դժվարությունների հանդիպող մարդկանց համար և ի թիվս այլ ֆունկցիաների, թույլ են տալիս մեկ՝ «Շտապ օգնություն» կոճակի սեղմումով կապ հաստատել նախապես գրանցված մինչև 5 հեռախոսահամարի հետ:

«Հայկական ակնաբուժության նախագծի հետ դեռևս մի քանի ամիս առաջ մեկնարկած մեր համագործակցության շնորհիվ արդեն հազարավոր մարդիկ ստացել են անվճար բժշկական օգնություն: «Երջանիկ ենք աջակցել նաև այսօրվա միջոցառմանը, որը խորհրդանշում է մեր հոգածությունը տեսողության խնդիրներ ունեցողների նկատմամբ», - ասաց է Orange Հիմնադրամի խորհրդի նախագահ Բրունո Դյուրուան:



# Բարեգործություն Անես Հայրադեյանի կողմից



Ամերիկահայ տիկին Անես Հայրապետյանը ՀԱՆ-ի վաղեմի բարեկամներից է: Լինելով Միավորված ազգերի կազմակերպության Կանանց գիլդիայի անդամ՝ նա ակտիվորեն աջակցում է տարբեր բարոգործական ծրագրերի, այդ թվում նաև ՀԱՆ-ի առաքելությանը Հայաստանում: Տիկին Հայրապետյանի և ՄԱԿ-ի Կանանց գիլդիայի աջակցությունը մեծամասամբ ուղղված է աչքի պրոթեզավորմանը: Տրամադրված հանգանակությունների շնորհիվ բազմաթիվ մարդիկ կարողացել են ստանալ անվճար պրոթեզներ և վերադառնալ նորմալ կյանքի:

## Պրոթեզներ երեխաների համար

Սկսած 2003 թ. «Հավատ և սեր» ՀԿ-ն աշխատում է ծնողագուրկ և հաշմանդամ երեխաների հետ և արդեն օգնել է ավելի քան 300 երեխաների: Ստորև ներկայացված երեխաներին պրոթեզ տրամադրելու գործում աջակցելու խնդրանքով կազմակերպության ներկայացուցիչները դիմել էին ՀԱՆ-ին, իսկ վերջինս՝ Անես Հայրապետյանին: Պրոթեզները տեղադրվել են Ս. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնում՝ բժիշկ Գագիկ Գասպարյանի կողմից:

### Էդմոն Մուրադյան



Հաղորդակցության միջոցներից 11-ամյա Էդմոն Մինասյանին կյանքը պարզևել է միայն տեսողություն: Երեխան ծնվել է խուլ և համր: Սակայն, մի քանի տարի առաջ տղային արտաքին աշխարհի հետ կապող միակ պատուհանը նույնպես մի պահ վտանգվեց, երբ վաղ հասակում բժիշկները նրա ակնահատակում ուռուցք հայտնաբերեցին: Բավականին ռիսկային և բարդ

վիրահատությունից հետո նա կորցրեց իր աջ աչքը: Երեխայի խնդիրները նրա մայրը՝ Լիլիթը, վերագրում է իր ամուսնու հետ զենեստիկ անհամատեղելիությանը: Այս իրավիճակից ելնելով՝ Էդմոնի ծնողները բաժանվել են՝ երեխային թողնելով միայնակ պապիկի հոգածությանը: Նոր տեղադրված պրոթեզի շնորհիվ Էդմոնն արդեն իրեն շատ լավ է զգում և անկաշկանդ շփվում է հասակակիցների հետ:

### Ջոիրաբ Նիկողոսյան



Ջոիրաբը ութ տարեկան է: Երկու տարեկանում բարեկամի անփութության պատճառով կորցրել է ձախ աչքը՝ հարվածելով այն պատին ցցված թողնված դանակին: Նրա մայրը՝ Թեհմինեն, խորը ցավով է հիշում այդ օրը: Երկար ժամանակ երեխան քաշվում էր իր արտաքին տեսքից, և հասակակիցների ծաղրանքների պատճառով խուսափում դպրոց հաճախելուց: Նոր պրոթեզի շնորհիվ Ջոիրաբի

ծնողները հույս ունեն լուծել այս խնդիրը:

### Մերի Սերոբյան



Մերին 16 տարեկան է: Ապրում է ծնողների, քրոջ և եղբոր հետ Երևանում: Հինգ տարեկանում բժիշկները նրա աջ աչքի խոռոչում ուռուցք հայտնաբերեցին և հեռացրեցին այն աչքի հետ միասին: Այդ օրվանից ամեն տարի Մերին պետք է նոր պրոթեզ ձեռք բերի, տարիքի հետ աճող օրգանիզմին համապատասխան, ինչը բավականին ծախսատար է համեստ եկամուտներով ապրող

իրենց ընտանիքի համար: ՀԱՆ-ի բարերար Անես Հայրապետյանի շնորհիվ Մերին իր պրոթեզը ստացավ անվճար: Նա նոր է սկսել հաճախել ավագ դպրոց և ցանկանում է թարգմանիչ դառնալ:

### Սյուզի Ալեքսանյան



Սյուզին 13 տարեկան է, ծնվել է Գյումրիում: Ծնվելուց 20 օր անց բժիշկները նրա երկու աչքերում խամրած եղջերաթաղանթ ախտորոշեցին: Հայաստանում բուժում ստանալու հույսը կորցնելով՝ Սյուզիի ծնողներն իրենց երեխային տեղափոխեցին Ռուսաստան, այնուհետև Ուկրաինա: Տարիների ընթացքում այդպես էլ չհաջողվեց բուժել Սյուզիին: Նա կորցրեց ձախ աչքը, պահպանելով թույլ

տեսողություն աջ աչքում: Այժմ Սյուզին սովորում է Երևանի թիվ 14 թույլ տեսողությամբ երեխաների դպրոցում: Ըստ Սյուզիի մայրիկի՝ Էվելինայի, Անես Հայրապետյանի հանագանակությամբ ստացված պրոթեզի շնորհիվ նրանց հաջողվել է Սյուզիին համոզել ավելի հաճախ դպրոց հաճախել: Բացի լավ սովորելուց, Սյուզին նաև հոյակապ երգում և պարում է:

### Տիգրան Հովհաննիսյան



Նախորդ պրոթեզի անհամատեղելիության և անհաջող բուժման պատճառով վեցամյա Տիգրանի աչքի ակնահատակում բորբոքում սկսվեց: Ինչպես նրա հայրը՝ Վիրամը պատմեց, նրանք գումարային խնդիրների պատճառով հաճախ բաց էին թողնում այցելությունները բժշկին՝ հնարավորություն չունենալով Աբովյանից Երևան հասնել: Արդյունքում

երեխայի մոտ խնդիրները բարդացան: Պրոթեզի տեղադրման օրը Հովհաննիսյանների ընտանիքը երջանիկ էր, իսկ բարենաղթանքները հովանավորներին՝ բազմաթիվ:

### Նվեր Սամսոնյան



Նվերի մեկ տարին նոր է լրացել. ծնվել է վաղահաս՝ 800 գրամ քաշով, հղիության 6-րդ ամսում, ինչի արդյունքում երկու աչքերում էլ անհասության ռետինոպաթիա է ձեռքբերել: Երեխային վիրահատության են տարել Սանկտ-Պետերբուրգ, որտեղ ցավոք չեն կարողացել փրկել աջ աչքը ու հեռացրել են այն: Նվերը պատահական անուն չի կրում: Նա Թագուհու և Հայկի չորրորդ

երեխան է՝ առաջին արու զավակը երեք դստերից հետո, ուստի շատ թանկ և սպասված երեխա: Նվերի ծնողներն անչափ գոհ ու շնորհակալ էին իրենց երեխայի հանդեպ բարեգործության համար:

# Պրոբեզներ մեծահասակների համար

Էմմա Խաչատրյանն առաջին մեծահասակն էր, ում անվճար ակնային պրոբեզ տրամադրվեց՝ պատրաստված Անետ Հայրապետյանի հանգանակության շնորհիվ:

## Էմմա Խաչատրյան

Դժբախտ պատահարը Էմմայի, նրա ընտանիքի և հարևանների կյանքում անմոռանալի հետք թողեց, երբ 1991 թ. մարտի 8-ին իրենց շենքի բակում պայթեց ավտոտնակում անփույթ կերպով թաքցված ամոնիում տեսակի պայթուցիկը: Պայթյունի հետևանքով զոհվեց 57 մարդ, իսկ շենքի բազմաթիվ բնակիչներ, այդ թվում Էմման իր ընտանիքի անդամների հետ, տարբեր աստիճանի վնասվածքներ ստացան: Էմման լուրջ վիրավորվել էր՝ կորցնելով աջ ձեռքի չորս մատները և ձախ աչքը: Նրա ամուսինը կորցրել էր ակնաջր, իսկ թոռնիկը գլխին խորը կտրվածքներ ստացել ու միայն հրաշքի շնորհիվ անվնաս պահպանել աչքերը:

Բուրրը հիշում են 90-ականները, երբ դարաբաղյան պատերազմի հետևանքով մեծ քանակությամբ գենք-գինամթերք էր շրջանառվում մարդկանց մոտ, և Էմմայի ընտանիքը միակը չէր դրանցից տուժվածների շարքում:

«Մենք լավ ընտանիք ենք և չկորցրեցինք միասնականությունը մեր կյանքում անմոռանալի հետք թողած այդ ահավոր օրվանից հետո»,-

ասաց Անահիտը՝ Էմմայի հարսը:

Էմման իսկապես լավ և մեծ ընտանիք ունի՝ չորս երեխա և 12 թոռ: Ապրում է որդիներից մեկի մոտ: Ընտանիքի հիմնական եկամուտը կազմում են հաշմանդամության նպաստները և Անահիտի անկայուն աշխատավարձը, որը նա ստանում է մաքրման աշխատանքների համար: «Մենք շատ անգամ ենք օգնություն ստացել, բայց Ձեր օգնությունն ամենաժամանակինն էր»,-ասաց Անահիտը:

Բարերարի անունն իմանալով Էմման ակնհայտորեն հուզվեց: Պատճառը մի փոքր անց պարզվեց՝ Էմմայի թոռնիկներից մեկի անունը նույնպես Անետ է:



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

# ԱՄՆ ՄՁԳ-ն և ՀԱՆ-ն ավարտեցին համագործակցությունը

2011 թ. սեպտեմբերին ավարտվեց ՀԱՆ-ի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) յոթամյա «Առաջնային և ակնաբուժական ծառայությունների դաշինք» ծրագիրը «Ձարգացման գլոբալ համագործակցության» շրջանակում:



ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ ՀԱՆ-ն աշխատել է ՀՀ տասը մարզերում՝ չորս հիմնական ուղղություններով՝ բժշկական օգնություն, բժշկական ուսուցում և վերապատրաստում, հանրային ուսուցում և գիտահետազոտական աշխատանքներ (վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծություն): Սկսած 2004 թ. ՀԱՆ-ի բժիշկները և Աչքի շարժական հիվանդանոցը (ԱՇՀ) չորս անգամ շրջել են ՀՀ ամբողջ տարածքով՝ այցելելով համայնքների գրեթե 90 %-ը (841): Ակնային հետազոտություն է անցել շուրջ 245,000 մարդ, որոնցից 10,000 ստացել են անվճար վիրահատություն կամ լազերային բուժում ԱՇՀ-ում, 36,000-ը՝ անվճար ակնոցներ:


Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են շուրջ 2,000 մարզային ակնաբույժներ և ընտանեկան բժիշկներ, անց են կացվել հանրակրթական դասընթացներ 12,000 երեխաների և 850 մեծահասակների համար, հրապարակվել է 13 անուն հանրակրթական բրոշյուր 602,000 տպաքանակով, որոնք գրեթե ամբողջությամբ բաժանվել են բնակչությանը:

Հրապարակվել է երկու մասնագիտական ձեռնարկ «Ակնային հիվանդություններ» (2005) և «Ակնաբուժության ընտրանի» (2007), որոնք եզակի են իրենց բնույթով: 2006 թ. Քանաքեռ-Ձեյթուն բժշկական կենտրոնում հիմնվել է Ցածր տեսողությամբ մարդկանց համար կենտրոնը և Կրթական և աշխատորոշման կենտրոնը Ս.Սալայանի անվան ակնաբուժական կլինիկայում, որտեղ այնուհետև բացվել է վիրաբուժական հմտությունների ձեռքբերման լաբորատորիան (Wet Lab):

ԱՄՆ ՄՁԳ համագործակցությամբ ՀԱՆ-ը կազմակերպել է երեք միջազգային համաժողով, այդ թվում 2010 թ. անհասության ռետինոպաթիա (ԱՌ) ակնային հիվանդության ախտորոշմանն ու բուժմանը նվիրված կոնֆերանսը, որը ՀՀ-ում սկիզբ դրեց ԱՌ դեմ պայքարի ազգային ծրագրին:

2010 թ. Տեսողության համաշխարհային օրվա թեմային համահունչ, ՀԱՆ-ը ՀՀ Առողջապահության նախարարության և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ միասին, պատիվ ուներ հրապարակելու «2020-ին ԸՆԴԱՌԱՋ՝ ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿ»

«ԱՇԽԱՍԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ» խորագրով գրքույկը, որը պարունակում է ՀՀ բնակչության ակնային առողջության ու ակնային հիվանդությունների տարածվածության գիտական գնահատականներ, որոնք ստացվել են ՀԱՆ-ի աշխատանքների տվյալների վերլուծության արդյունքում: Դրանք հնարավորություն են տալիս գնահատել ինչպես բնակչության ակնային առողջության վիճակը, այնպես էլ ակնաբուժական ծառայությունների պահանջարկը երկրում:



ՀԱՆ-ի անձնակազմն, ի դեմս ԱՄՆ-ում և Հայաստանում գործող գրասենյակների, իր խորին երախտագիտությունն է հայտնում ԱՄՆ կառավարությանը և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությանը ռազմավարական և ազդեցիկ գործընկեր լինելու համար:

ՀՀ բնակչության մի ստվար զանգված իրենց իսկ բնակավայրերում ստացել է որակյալ ակնաբուժական ծառայություններ՝ էական ազդեցություն ունենալով կյանքի որակի բարելավման գործում:

